ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝Հ. Թորոսյան, Հ. Մարտիրոսյան, Ա. Կարապետյան , Ս. Սողոմոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի մասին

/ Ա. Գասպարյան /

1.1. - վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ,
-օրը՝ 12.03.2020թ.,
-ժամը՝ 11:00

1.2 Ընդունել ի գիտություն, որ «ՄԻԿՈՐԻԶԱ» ՍՊԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը: Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 42-րդ կետով, որոշեց վերոնշյալ մասնակցի հայտը գնահատել բավարար:

1.3 Գնման ընթացակարգը 5, 14, 15, 16, 17-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն հայտարարվել է չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

2. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Ա. Գասպարյան)

2.1 Գանահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, որոշեց նիստը կասեցնել է և բավարար գնահատված մասնակիցներին էլեկտրոնային ձևով

ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների **/4, 6, 10, 11, 13, 18-րդ չափաբաժինների մասով /** վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Գասպարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **20.03.2020թ. ժամը 11:00-ին**, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի. Նախագահ՝		Ա. Գասպարյան
Անդամներ՝		Ս. Սողոմոնյան
		Հ. Թորոսյան
		Հ. Մարտիրոսյան
		Ա. Կարապետյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան